քննադատական սկզբունքներից մեկը. «Արվեստի գործը պիտի դատվի ինքն իր մեջ, չէ թե մեր ձգտումներուն, հավատամքին համեմատ: ...Գեղարվեստական գործեն ստեղծագործ ուժ կը պահանջվի միայն, երբ անիկա մեզ կը հուզե, խորհելու կը մղե և կը գոհացնե մեր գեղարվեստական զգացումը, այդ արդեն իր հաջողության մեծագույն գրավականն է»:

Չյոկյուրյանի այս դիտողություններն ունեին իրենց որոշակի գեղագիտական ակունքները, որոնք արտահայտում էին դարասկզբի արևմտահայ գեղապաշտ մտայնությունը՝ հասցված որոշակի միակողմանիության: Հենց այդ միակողմանիությունն էլ քննադատվում է ասուլիսի մյուս բանախոսների կողմից: Չյոկյուրյանն ինքն էլ, չնայած վերլուծության վիճելի ելակետին, հատկապես դրամայի գեղարվեստական յուրահատկությունների մասին անում է ճիշտ դիտողություններ: Նա իրավացի է, օրինակ, երբ գտնում է, թե Շանթի հերոսները սովորական տիպեր կամ բնավորություններ չեն, այլ խորհրդանշաններ են, որոնց չի կարելի մոտենալ հոգեբանական վերլուծության սովորական չափանիշներով: Չյոկյուրյանը նուրբ դիտարկումներ ունի հատկապես դրամայի լեզվի ու ոճի, կառուցվածքային առանձնահատկությունների, խորհրդանշան-հերոսների մեկնաբանության վերաբերյալ:

Հաջորդ բանախոսությունը ևս (բանախոս Մ. Մար) նվիրված է «Հին աստվածների» ընդհանուր վերլուծությանը: Ասուլիսներում դա ընդունված ձև էր. միևնույն հարցի մասին տարբեր տեսակետների հրապարակումով ասուլիսների կազմակերպիչները ձգտում էին հասնել գրական երևույթների ավելի խոր ու բազմակողմանի մեկնաբանության: Տվյալ դեպքում երկրորդ բանախոսի կարծիքները Շանթի դրամայի մասին հիմնականում համընկնում են Չյոկյուրյանի տեսակետներին: Մ. Մարի համոզմամբ՝ «Եթե այդ տոռամը համարենք հայ կյանքից առնված, դրանով նրա շրջանակը շատ սեղմած, նսեմացրած կը լինենք: Այնտեղ արծարծված հիմնական հարցը շատ է անսահման մեկ ժողովրդի կյանքի մեջ պարփակվելու համար»: Ուստի նա «Հին աստվածները» համարում է վերազգային և վերժամանակային գործ: Հասկանալի է, որ այսպիսի պնդումը ևս միակողմանի է, քանի որ Շանթի դրաման որքան վերժամանակային էր, նույնքան էլ արտահայտում էր մի որոշակի դարաշրջանի՝ 20-րդ դարի սկզբի մտածողությունն ու հոգեբանությունը, որքան համամարդկային,